Արձանագրություն N 2

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

11.04.2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Մանուշակ Ավետիսյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

1. **<u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>**

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 10:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 8500000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. **<u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին</u>**

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

1/ «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ – ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզական, Անտառային 8, հեռ. 091 20 61 49, էլ. փոստ info@arthurs-hotel.am

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ՝

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

1/ **«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ՝** 7686000 (յոթ միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 6405000 (վեց միլիոն չորս հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

5. **Մասնակիցների կողմից համապատասխան տեղեր զբաղեցնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց՝

Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. **Առաջին տեղ մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2019թ. ապրիլի 17-ին ժամը 11:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Կուլախսզյան

_____ Մ. Ավետիսյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան